

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՉԵԿՈՒՅՑ**

**ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ
ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻՆ**

ԲԱԿԱՐԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՎ ԳՅՈՒՄՐԻ
ՔԱՂԱՔՈՒՄ 1988Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՁԵՒՔ ԲԵՐԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻ ԿՐԱ

**ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՅԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿԿՈՂ
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ**

**ԲԱՎԱՐԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

*ԿԵՆՏՐՈՆԱՆԱԿԼՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 1988Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ
ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՎՐԱ*

Այս զեկույցը պատրաստվել է «GSP+-ի միջոցով մարդու և աշխատանքային իրավունքների խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում և այժմ ներկայացվում է GSP+ մոնիթորինգի գործընթացի համար: Ավելի ուշ ամսաթվով զեկույցը պետք է ներկայացվի նաև ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, հետևաբար զեկույցի բովանդակությունը մինչ այդ կարող է փոփոխվել:



**DEMOCRACY
REPORTING
INTERNATIONAL**



Ձեկույցը պատրաստեցին՝

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը,

**«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն»
հասարակական կազմակերպությունը,**

**«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն»
հասարակական կազմակերպությունը,**

«Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամը,

**«Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում»
հասարակական կազմակերպությունը:**



ՀԱՅՏՈՒՆԱԿԱՆ ԵՐԱՅՈՒՆԻ ԱՐՄԵՆԻԱ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամը և «Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովադակություն

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՉԵԿՈՒՅՑՆԵՐ

Ամփոփ տեղեկություն զեկույցի վերաբերյալ.....	1
Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման մարտահրավերները Հայաստանում.....	2
Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի օրենսդրական երաշխիքներն ու ազգային քաղաքականությունը.....	2
Երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձանց՝ բնակարանային փոխհատուցման տրամադրման իրավակարգավորումներն ու դրանց հետ կապված խնդիրները՝.....	4
ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում բնակվող և 1988թ.-ի երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձանց բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման խնդիրները.....	12
Երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանային փոխհատուցում ստացած անձանց հետ իրականացված խմբային հարցազրույցների արդյունքում վերհանված խնդիրների ամփոփում 14	14
Գյումրու տնակային ավան և Իսահակյան 9 և Խրիմյան Հայրիկ 48 հասցեներով գտնվող վթարային շենքեր այցելության շրջանակներում անհատական/խորքային հարցազրույցների և տեղանքի դիտարկման արդյունքում վերհանված խնդիրների ամփոփում.....	16
«Փարոս» համայնքատիրության հետ խմբային հարցազրույցի արդյունքում վերհանված խնդիրների ամփոփում և դեպքի նկարագրություն.....	18
Եզրակացություններ և առաջարկություններ.....	20
Հավելված 1. Բավարար բնարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացված դաշտային ուսումնասիրության գործիքակազմի նկարագրություն.....	23

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՉԵԿՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- (1) Սույն այլընտրանքային զեկույցի նպատակն է ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (ՏՍՄԻԿ) տեղեկություն տրամադրել ՀՀ Կառավարության կողմից ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագրի) 11-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների իրականացման վերաբերյալ: Դաշնագրի հոդված 11-ով ամրագրված է պետության պարտավորությունն՝ ապահովելու յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Չեկույցը վերաբերում է Հայաստանում Դաշնագրի հոդված 11-ով սահմանված՝ բավարար կենսամակարդակի իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ *բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման խնդիրներին, մասնավորապես, կենտրոնանալով 1988թ.-ի երկրաշարժի արդյունքում ստեղծված աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների՝ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման խնդրի շուրջ:*
- (2) ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը վավերացվել է ՀՀ Կառավարության կողմից 1993թ.: Հայաստանը 2009 թ.-ին ստորագրել է, սակայն առ այսօր չի վավերացրել Դաշնագրին կից կամընտիր արձանագրությունը, որով կապահովվեր Հայաստանից ՏՍՄԻԿ անհատական կոմունիկացիաներով դիմելու հնարավորությունը:
- (3) Չեկույցում տեղ գտած բոլոր վերլուծություններն ու դիտարկումները վերաբերում են ՏՍՄԻԿ-ի կողմից իրականացված վերջին դիտարկումից՝ 2014 թ.-ից առ այսօր տեղի ունեցած օրենսդրական և փաստացի զարգացումներին: Այսպիսով, զեկույցի ժամանակային շրջանակն է 2014-2019 թթ.:

ԲԱՎԱՐԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի օրենսդրական երաշխիքներն ու ազգային քաղաքականությունը

- (1) ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը, ներպետական օրենսդրությունը չի պարունակում այնպիսի կարգավորումներ, որոնք լիարժեք կերպով կարտացոլեն ՏՄՄԻԿ ԸՄ 4-ով սահմանված՝ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի ամբողջ շրջանակը:
- (2) Մինչև 2015 թ.-ի սահմանադրական փոփոխությունները Հայաստանում բավարար կենսամակարդակի իրավունքը, բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը երաշխավորված էր Սահմանադրությամբ: Սահմանադրության հոդված 34-ով սահմանվում էր՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»*: Բացի այդ, Սահմանադրության հոդված 48-ով տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներներից էր սահմանվում *«խթանել բնակարանային շինությունը և նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը»*¹:
- (3) *2015թ.-ից ի վեր գործող Սահմանադրության հոդված 32-ով ամրագրված է բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, իսկ հոդված 86-ով տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակ է ճանաչվում բնակարանային շինության խթանումը²: Տվյալ հոդվածները չեն կարող դիտարկվել իրբև բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման սահմանադրական երաշխիքներ, քանի որ միայն մասնակիորեն են արտացոլում ՏՄՄԻԿ ԸՄ 4-ով սահմանված՝ տվյալ իրավունքի շրջանակները³: «Բավարար բնակարանային պայմաններ»*

1. Տե՛ս, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

2. Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

3. Տե՛ս, <https://www.refworld.org/docid/47a7079a1.html>

Եզրույթը չի սահմանվում և չի մեկնաբանվում ՀՀ օրենսդրությամբ:

- (4) *SUՄԻԿ ԸՄ 4-ը հստակեցնում է, որ Դաշնագրի հոդված 11-ով սահմանված՝ բավարար բնակարանային իրավունքը չի ենթադրում զուտ անձին բնակելի տարածքով ապահովում, այլ ապահովում այնպիսի բնակարանային պայմաններով, որոնք համապատասխանում են բնակարանային պայմանների «բավարարության» մի շարք չափանիշներին, ինչպես՝ հարմարությունների, ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիությունը; բնակարանային՝ կոմունալ վճարների ֆինանսական մատչելիությունը; բնակարանի անվտանգությունը, պատշաճ ջեռուցման, տաք և սառը ջրի, սանիտացիայի առկայությունը; տեղանքը՝ աշխատանքային վայրերի, սոցիալական ու առողջապահական և այլ անհրաժեշտ ծառայություններ մատուցող կառույցներից բնակարանի՝ հասանելի հեռավորության վրա գտնվելը:*

Հայաստանում առկա չէ նորմատիվային այնպիսի հիմք, որն ամփոփ կերպով կներկայացնէր բնակարանային պայմանների «բավարարության»՝ SUՄԻԿ ԸՄ 4-ով սահմանված բաղադրիչները և հիմք կծառայեր նրանց պահպանման համար:

- (5) *Վերջին պեկուցման շրջանից ի վեր պետությունը նաև չի ապահովել Դաշնագրի հոդված 2-ով սահմանված՝ դաշնագրային իր պարտավորությունները առաջադիմորեն (progressively) իրականացնելու պարտավորությունը, քանի որ բավարար կենսապայմանների և բնակարանային պայմաններ ունենալու սահմանադրական երաշխիքների վերացումը հետընթաց քայլ է Հայաստանում:*

- (6) *Ինչ վերաբերում է քաղաքականության փաստաթղթերին, ՀՀ 2014-2025 Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով սոցիալական պաշտպանության բնագավառի ընդհանուր առաջնահերթությունների շարքում է հռչակված սոցիալապես անապահով ու խոցելի բնակչության կարողությունների ու հնարավորությունների համալիր ընդլայնումը՝ այդ թվում, բնակարանային ու այլ կարիքների բավարարման միջոցով⁴: Ռազմավարության ծրագիրը նաև մատնանշում է Հայաստանում աղքատության ցուցանիշի տարածքային դինամիկան, որտեղ աղքատության ամենաբարձր մակարդակը Շիրակի մարզում է:⁵ Հայաստանում առկա*

4. Տե՛ս, <https://www.gov.am/files/docs/1322.pdf>

5. Նույն տեղում:

չէ, սակայն, ազգային բնակարանային քաղաքականությունը ներկայացնող մեկ ամփոփ փաստաթուղթ, որը SUՄԻԿ ԸՄ 4-ով դիտարկվում է իբրև բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման առանցքային բաղադրիչ:⁶ Կոմիտեի պահանջն է, որ նման փաստաթուղթը մշակվի մասնակցության սկզբունքի պահպանմամբ, երաշխավորելով խնդրի շրջանակներում առավել խոցելի խմբերի՝ ներառյալ, անօթևանների, գործուն մասնակցությունը:⁷

Երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձանց՝ բնակարանային փոխհատուցման տրամադրման իրավակարգավորումներն ու դրանց հետ կապված խնդիրները՝

(7) 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժն ընդգրկեց հանրապետության տարածքի շուրջ 40 տոկոսը՝ մոտ 1 մլն բնակչությամբ: Երկրաշարժի արդյունքում քանդվեց կամ տարբեր աստիճանի վնասվածություն (I-IV աստիճան) ստացավ 8,9 մլն. քառ. մ ընդհանուր մակերեսով բնակարանային ֆոնդ⁸: Երկրաշարժի հետևանքով ամբողջությամբ ավերվել է Սպիտակ քաղաքը, 80 տոկոսով ավերվել է Գյումրի քաղաքը, մասամբ ավերվել են Ստեփանավանը և Վանաձորը⁹:

7.1) Երկրաշարժի արդյունքում տուժած Շիրակի մարզի համայնքներում վնասվել է 3,677 մլն. քառ. մ ընդհանուր մակերեսով բնակտարածություն: Գյումրիում փլվել է շուրջ 22 հազ. բնակարան¹⁰:

7.2) 1988 թ-ի երկրաշարժից անցել է 31 տարի, սակայն մինչ օրս աղետի գոտում անօթևանությունը շարունակում է մնալ օրակարգային խնդիրներից ամենահրատապը: *Պետության կողմից մարդու իրավունքի կոպիտ խախտում է 31 տարիների ընթացքում այս խնդրին վերջնական լուծում չտալը, հաշվի առնելով այն, որ աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների բնակարանային փոխհատուցումը՝ 33 օրենսդրությամբ սահմանված*

6. SUՄԻԿ ԸՄ 4, պար. 12:

7. Նույն տեղում:

8. Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=922>

9. Տե՛ս, <https://armeniasputnik.am/armenia/20161207/5704855/spitak-erkrasharj-1988.html>

10. Տե՛ս, http://www.partnership.am/res/POS%20Publications_Arm/Monitoringi%20zekuyaci%20girq.pdf?fbclid=IwAR0Ysbu-eYU5vshh6KX61Mcyj0-UJGc9IF7o-0CgDPiKhPY4TJiyqa-0AM

պետական պարտավորություն է:

- 7.3) ՀՀ Կառավարության 2019 թ.-ի ծրագրով Կառավարության գործունեության կարևորագույն նպատակներից է սահմանված 1988 թվականի երկրաշարժի հետևանքով մինչ այժմ տնակներում բնակվող ընտանիքների բնակարանային խնդիրների գույքագրումը՝ նպատակ ունենալով առավելագույնս սեղմ ժամկետներում բնակարաններով ապահովել երկրաշարժի հետևանքով բնակարանի կարիք ունեցող ընտանիքներին¹¹:
- 7.4) Կարևոր է գիտակցել, որ բնակարանային փոխհատուցումը ի սկզբանե չպիտի հանդիսանար պետության կողմից երկրաշարժի արդյունքում տուժած և անօթևան մնացած անձանց տրամադրվող՝ պետական աջակցության միակ հիմնական միջոցը: Պետությունը՝ ի կատարումն դաշնագրային իր պարտավորությունների, պետք է ապահովեր խոցելի այս խմբի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, այդ թվում՝ բավարար կենսամակարդակի, առողջության, կրթության, աշխատանքի և այլ իրավունքների իրականացման երաշխիքները:
- 7.5) Երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձինք տասնամյակներ շարունակ ապրել են և շարունակում են ապրել ծայրահեղ աղքատության պայմաններում, իսկ պետության կողմից առ այսօր չի տրվել որևէ համապատասխան արձագանք՝ խնդրի լուծման շրջանակներում:¹² Խնդրի համալիր լուծման բացակայության պայմաններում, բնակարանային փոխհատուցում ստացած բազմաթիվ քաղաքացիներ ստիպված վաճառել են իրենց բնակարանները՝ առողջական և կենսական պայմանների ու խնդիրների լուծման անհրաժեշտությունից դրդված, այսպիսով՝ կրկին հայտնվելով անօթևանության մեջ, սակայն արդեն զրկված լինելով բնակապահովման որևէ աջակցությունից:¹³ Այսպիսով, Գյումրու անօթևանության խնդրի շրջանակներում, երկրաշարժի արդյունքում ստեղծված առաջնային անօթևանությունից զատ, տասնամյակների ընթացքում ձևավորվել է նաև երկրորդային անօթևանության խնդիր, որին որևէ լուծում առ այսօր չի տրվել:

11. Տե՛ս, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

12. Տե՛ս, <https://oc-media.org/the-two-faces-of-gyumri/>

13. Տե՛ս, <https://hetq.am/hy/article/102091>

- 7.6) Կոմիտեի կողմից բնակարանն ու բնակարանի իրավունքը մեկնաբանվում է իբրև ոչ զուտ ապրելու տարածք ունենալու իրավունք, այլ իրավունք՝ արժանապատվորեն ապրելու որևէ տեղ ապահովության և խաղաղության պայմաններում (the right to live somewhere in security, peace and dignity):¹⁴ Եկրաշարժից անցած 31 տարիների ընթացքում՝ պետության կողմից դրսևորված համակարգային ծախսողման, կոռուպցիայի և անուշադրության արդյունքում, տվյալ պայմանը չի բավարարվել աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների հանդեպ՝ ո՛չ նրանց այն զանգվածի հանդեպ, ովքեր ստացել են բնակարանային փոխհատուցում, ո՛չ առավել ևս նրանց, ովքեր առ այսօր ապրում են տնակային պայմաններում:
- 7.7) ԶՅ կառավարության 2018թ. թիվ 361-Ն և ԶՅ վարչապետի 2018թ.թիվ 1658-Ա որոշման համաձայն¹⁵, աղետի գոտու քաղաքային բնակավայրերում իրականացվում է պետական, համայնքային և այլ անձանց սեփականությունը հանդիսացող տարածքներում տեղակայված ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների փաստագրում: Փաստագրման նպատակն է ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման՝ բնակարանային պայմանների բարելավման գործընթացի, այդ գործընթացում պետական պարտավորության ծավալները գնահատելու, տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու, քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինություններն օրինականացնելու վերաբերյալ առաջարկությունների մշակումը: Փաստագրման իրականացման համար ստեղծված Աշխատանքային խմբի աշխատանքների վերջնաժամկետն էր 2019թ-ի հունիսի 30-ը:
- 7.8) Աշխատանքային խմբի գործառույթները, սակայն, չեն ներառում ոչ հիմնական շինություններում ապրող անձնաց կարիքների և խոցելիությունների համալիր գնահատումը, նրանց ունեցած սոցիալական զրկանքների և նրանց իրավունքների իրացման խնդիրների վերհանումը, ինչը բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի անբաժան մասն է:

14. SUՄԻԿ, ԸՄ 4, պար. 7:

15. ՏՖՆ, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=97728>

(8) ՀՀ կառավարության 1999 թ.-ի N 432 որոշմամբ, որը հանդիսանում է անօթևան մնացած անձանց բնակարանների արհատերթ հատկացման իրավական դաշտը կարգավորող առաջին ակտը¹⁶, բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները, որոնց կացարանները երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի: Տվյալ կարգավորումը վերաբերում է միայն բուն երկրաշարժի արդյունքում քանդված կամ վթարայնություն ձեռքբերած շենքերի բնակիչներ հանդիսացող քաղաքացիներին, մինչդեռ կան երկրաշարժից վնասված շենքեր, որոնք ձեռք են բերել վթարայնության բարձր աստիճան պետության անգործության 30 տարիների ընթացքում, իսկ պետության արձագանքման և վթարային շենքերում բնակվող անձանց աջակցության տրամադրման միջոցառումների մասին նման տեղեկություններ հայտնաբերել չի հաջողվել: Միևնույն ժամանակ, զեկույցի շրջանակներում իրականացված դաշտային ուսումնասիրություններով վեր է հանվել այն հանգամանքը, որ պետության կողմից պատշաճ կերպով չի իրականացվում շենքերի վթարայնության գնահատումը, չի դիտարկվում երկրաշարժի արդյունքում տուժած և հետագա 30 տարիների ընթացքում վթարայնության սաստիկ աստիճանի հասած շենքերի վիճակը, որում բնակվող անձանց չի տրամադրվում որևէ բնակարանային փոխհատուցում:

8.1) ՀՀ կառավարության 1999 թ.-ի N 432 որոշման 16-րդ կետի համաձայն՝ *«Բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են սույն կետով սահմանված նորմաների սահմաններում, սակայն վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվից ոչ ավելի»:* Բնակարանային փոխհատուցման տրամադրման պարագայում գործում է հետևյալ մեխանիզմը՝ եթե հերթացուցակում գտնվելու ժամանակահատվածում՝ մինչև բնակարանային փոխհատուցում ստանալը, շահառու ընտանիքի անդամների թիվը պակասել է, օրինակ, անդամներից որևէ մեկի մահվան հանգամանքով, ապա տվյալ ընտանիքին փոխհատուցումը տրամադրվում է ընտանիքի նվազած անդամների հաշվեթանակով: Իսկ եթե հերթացուցակում գտնվելու ժամանակահատվածում ընտանիքի անդամների քանակը, ընդհառակը՝

16. Տե՛ս, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=42562>

ավելացել է, օրինակ, պայմանավորված երեխաների ծնունդով, ապա բնակարանային փոխհատուցումը չի տրվում ավելացած անդամների հաշվարկով: Արդյունքում, բազմաթիվ դեպքերում պետության կողմից փոխհատուցված բնակարան են տեղափոխվել ընտանիքների մի մասը՝ ընտանիքի ընդլայնված կազմի համար տարածքի անբավարարության պատճառով: Ուստի պետության լուծումն է եղել թույլ տալ ընտանիքի մի մասին շարունակել ապրել տնակներում այսպիսով խթանելով անօթևանության խնդրի շարունակական բնույթը և ոչ թե ստեղծելով հնարավորություն ընտանիքի բոլոր անդամների համար իրացնելու իրենց բնակարանային իրավունքները:

- 8.2) ՀՀ կառավարության 1999 թ.-ի N 432 որոշման 18-րդ կետով սահմանվում է աղետի գոտու բնակավայրերում արտահերթ բնակելի տարածությունների հատկացման հերթականությունը ըստ չափորոշիչների, որոնց ընտրության և սահմանման տրամաբանությունը հասկանալի չէ, իսկ ներկայացված ցանկը վերանայման կարիք ունի՝ համապատասխանեցվելով ներկայիս իրականությանը, աղետի գոտու բնակավայրերի ներկայիս բնակիչների խմբերին՝ ըստ նրանց կարիքների և խոցելիությունների:
- 8.3) Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառում վերջին անգամ իրականացվել է 11 տարի առաջ՝ ՀՀ կառավարության 2008թ. N 1024-Ն որոշմամբ, ըստ որի վերահաշվառման վերջնաժամկետ է սահմանվել 2008 թ. նոյեմբերի 1-ը¹⁷: ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշմամբ վերահաշվառված ընտանիքների համար՝ բնակարանային փոխհատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:¹⁸ Այն անձինք, ովքեր մինչև նշված վերջնաժամկետը չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերով համալրված ամբողջական փաթեթ, պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում այլևս չեն դիտարկվել:

17. Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=46431>

18. Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=71050>

8.4) Կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշման հիմքում է ընկած ՀՀ կառավարության 1999թ.-ի N 432 որոշումը, որի համաձայն քաղաքացիները հաշվառումից հանվում են, եթե ա) *հաշվառման վերցված անձանց բնակարանային պայմանները բարելավվել են, որի կապակցությամբ վերացել են հաշվառման մեջ գտնվելու հիմքերը*, բ) *հաշվառման վերցված անձինք մշտական բնակության են փոխադրվել այլ բնակավայր*, գ) *բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու մասին ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ*:¹⁹ Տվյալ պարագայում բաց է մնում պետության կողմից տվյալ անձանց հանդեպ իր պատրավորությունների կասեցման իրավական հիմքը և ստեղծված իրավիճակում տվյալ անձանց բնակապահովման խնդրի կարգավորման եղանակը: Տվյալ խնդրին անդրադարձ է արվում 2018թ.-ի Մարդու իրավունքի պաշտպանի (ՄԻՊ) տարեկան զեկույցում²⁰:

8.5) Անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ օրենսդրական թերի կարգավորման ևս մեկ օրինակ է հանդիսանում ՀՀ կառավարության 2009թ. 1402-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությանը սահմանվող պայմանը, ըստ որի՝ *«Կառուցված բազմաբնակարան շենքերից (բնակելի տներից) հատկացվող բնակարանի (բնակելի տան) չափի որոշման ժամանակ ընտանիքի կազմում չի հաշվառվում անհրաժեշտ հիմնավոր փաստաթղթեր ներկայացնելու համար պատշաճ ձևով իրազեկված ընտանիքի այն անդամը (երկրաշարժի հետևանքով քանդված հասցեում հաշվառված, ՀՀ քաղաքացի հանդիսացող), որի վերաբերյալ ընտանիքի մնացած բոլոր չափահաս անդամների կողմից տրված գրավոր հայտարարության համաձայն անհնար է ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը»*:²¹ Նշված իրավիճակում ընտանիքի տվյալ անդամի բնակարանային ապահովման նկատմամբ պետական պարտավորությունները համարվում են կատարմամբ դադարեցված և հետագայում ի հայտ գալու պարագայում նրա բնակարանային

19. Տե՛ս, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=42562>

20. Տե՛ս, <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f-463c0e6c42f12cb497d483739dec.pdf>

21. Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=70320>

ապահովման պատասխանատվությունը կրում են պետական աջակցության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացած և գրավոր հայտարարություն տված ընտանիքի բոլոր չափահաս անդամները: Ոլորտի պատասխանատուների պնդմամբ, որոշման այս կետն անհրաժեշտ էր, քանի որ շատերը բացակայում էին հանրապետությունից և, որպեսզի, ընտանիքի մյուս անդամներն էլ չզրկվեին բնակարան ստանալու իրենց իրավունքից, այս տարբերակն ընդունվեց: Տվյալ գեկույցը պատրաստող դաշինքի անդամ կազմակերպության պրակտիկայում լինում են բացմաթիվ դեպքեր, երբ քաղաքացիները խարդախության, կոռուպցիայի, ինչպես նաև իրենց ընտանիքի անդամների կողմից խաբեության զոհ դառնալով՝ զրկվել են բնակարանային փոխհատուցման իրենց իրավունքից վերոգրյալ դրույթի կիրառման արդյունքում²²:

- (9) Բնակարանային փոխհատուցումը՝ սոցիալական բնակարանների հատկացումից զատ, իրականացվել է նաև պետության կողմից բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) տրամադրման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեներով նախատեսված «Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» պետական ծրագրի շրջանակներում: Ծախսային ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 24 փետրվարի 2005 թվականի N 309-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեներով՝ բնակարանային ապահովման ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման կարգը: Համաձայն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի ա) ենթակետի՝ վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար աջակցություն ստանալու իրավունք ունեն այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» N 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվառված են բնակարան ստանալու համար՝ 2004 թվականի մարտի 1-ի դրությամբ: Պետության կողմից իր պարտավորությունների իրացման նման ձևաչափը, սակայն, առաջացրել է մի

22. Հարցազրույց Վանուհի Գասպարյանի հետ, 15 ապրիլ, 2019թ.

չարք խնդիրներ շահառուների համար, որոնք վեր են հանվել զեկույցի շրջանակներում իրականացված խմբային ու խորքային հարցազրույցների արդյունքում և ներկայացված են զեկույցի հաջորդ բաժնում:

- (10)** Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման կարևոր բաղադրիչ է հանդիսանում իրավունքի վերականգման արդյունավետ ներպետական մեխանիզմների հասանելիությունը: Հայաստանում առկա չեն իրավական այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին արտադատարանական կարգով պաշտպանելու և/կամ վերականգնելու իրենց բնակարանային իրավունքները: Իրավունքի վերականգման էֆեկտիվ մեխանիզմները բացակայում են մի շարք խնդիրների պատճառով, ինչպես՝ դատավարական ժամկետների սղությունը, դատական իշխանության կոռուպացված լինելու հանգամանքը, որի արդյունքում առ այսօր խոչընդոտվել է բազմաթիվ քաղաքացիների բնակարանային իրավունքների վերականգնումը²³:
- (11)** Այսպիսով, երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձանց բնակարանային փոխհատուցման տրամադրումը կարգավորող իրավական դաշտը անհստակ է, պարունակում է բազմաթիվ բացեր, առկա է հստակեցումների և վերանայումների կարիք:
- (12)** Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձանց համար պետության կողմից առ այսօր իրականացված բոլոր ծրագրերն ուղղված են եղել միայն բնակարանային փոխհատուցմանը: Իրականացվող բնակապահովման ծրագրերը պետության կողմից չեն ենթարկվել պատշաճ մշտադիտարկման և գնահատման, առկա չէ այդ ծրագրի արդյունքների վերաբերյալ հանրային հաշվետվողականության որևէ մեխանիզմ, ծրագրերը չեն ձևավորվել շահառուների հետ խորհրդակցությունների, նրանց՝ հատուկ բնակարանային կարիքների, առողջական և սոցիալական այլ առանձնահատկությունների և խոցելիությունների գնահատման միջոցով, ինչը բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի կարևոր բաղադրիչ մաս է:
- (13)** Պետության կոմից տևականորեն ոտնահարվել են աղետի գոտում և մասնավորապես, ք. Գյումրիում երկրաշարժի արդյունքում անօթևան

23. Հարցազրույց Վանուհի Գասպարյանի հետ, 15 ապրիլ, 2019թ.

մնացած անձանց՝ Դաշնագրի 11-ով սահմանված իրավունքները, ինչպես նաև չի ապահովվել Դաշնագրի հոդված 2-ով սահմանված՝ դաշնագրային իր պարտավորությունները առաջադիմորեն (progressively) իրականացնելու պարտավորությունը, քանի որ Կոմիտեի կողմից իրականացված վերջին դիտարկումից՝ 2014 թ-ից ի վեր չի իրականացվել անօթևան անձանց հաշվառում, նրանց կարիքների և խնդիրների գնահատում, դրանց արձագանքմանն ուղղված նոր ծրագրերի և քաղաքականության մշակում:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԵՎ 1988Թ.-Ի ԵՐԿՐԱԶԱՐԺԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՆՕԹԵՎԱՆ ՄԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՎԱՐԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(14) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում բնակվող և 1988 թ.-ի երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած անձանց բնակարանային և սոցիալական պայմաններին ծանոթանալու, նրանց՝ բնակարանային իրավունքների իրացման խնդիրները վերհանելու նպատակով իրականացվել է դաշտային ուսումնասիրություն: Ուսումնասիրությունն իրականացվել է երկրաշարժի արդյունքում տուժած հետևյալ խմբերի շրջանում՝

- a) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից անմիջականորեն բնակարանային փոխհատուցում ստացած անձինք/ընտանիքներ,
- b) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանների գնման վկայագրեր (ԲԳՎ) ստացած անձինք/ընտանիքներ,
- c) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանային փոխհատուցում չստացած՝ Գյումրու տնակային ավանում բնակվող անձինք/ընտանիքներ,
- d) երկրաշարժից վնասված, վթարային շենքերում ապրող անձինք/ընտանիքներ (Իսահակյան 9 և Խրիմյան Յայրիկ 48 հասցեներով գտնվող շենքեր):

(15) Նշված խմբերը ներկայացնող անձինք, տասնամյակներ շարունակ

ապրելով ծայրահեղ աղքատության և անօթևանության պայմաններում, գտնվում են հուսահատ վիճակում, այլևս չունեն պետությունից աջակցության և իրենց իրավունքների պաշտպանության որևէ ակնկալիք, ուստի և հրաժարվում են խոսել իրենց խնդիրների մասին, ինչը նաև հանդիսացավ դաշտային ուսումնասիրության հիմնական խոչընդոտը:

15.1) Ուսումնասիրությունն իրականացվել է խմբային և անհատական/խորքային հարցազրույցների և տեղազննության/տեղանքի դիտարկման միջոցով՝ հիմնվելով նախապես պատրաստված հարցաշարի և դիտարկման քարտերի վրա, որոնք կազմվել են ըստ ՏՄՄԻԿ ԸՄ 4-ով սահմանվող բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման չափանիշների: Ուսումնասիրության ընտրանքի և գործիքակազմի նկարագրությունը ներկայացված է սույն զեկույցին կից՝ հավելված 1-ում:

(16) Խորքային հարցազրույցներն ու տեղազննություններն իրականացվել են Գյումրու տնակային ավան և վթարային շենքեր այցելության միջոցով:

(17) Պետության կողմից երկարաշարժից տուժած անձանց հանդեպ իր պարտավորությունների ձախողման, տվյալ անձանց՝ բավարար կենսամակարդակի և բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի տևական ոտնահարման ցայտուն օրինակ է հանդիսանում «Փարոս» համայնքատիրության դեպքը:

(18) Իրականացված դաշտային աշխատանքները ցույց են տալիս, որ աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների համար՝ բնակապահովման միջոցով ստեղծված բնակարանային պայմանները չեն համապատասխանում ՏՄՄԻԿ ԸՄ 4-ով սահմանված՝ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի չափանիշներին, պետության կողմից տարիներ շարունակ ոտնահարվել են նրանց՝ Դաշնագրի 11 հոդվածով սահմանված իրավունքները:

Երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանային փոխհատուցում ստացած անձանց հետ իրականացված խմբային հարցազրույցների արդյունքում վերհանված խնդիրների ամփոփում

(19) *Չարցվածների մեծ մասը բնակարանային փոխհատուցում պետության կողմից ստացել է երկրաշարժից 20-30 տարի անց: Բնակարանային փոխհատուցման տրամադրման շրջանակներում դիտարկվել է ընտանիքի կազմի փոփոխությունը՝ միայն նվազման պարագայում, ինչի հետևանքով այն ընտանիքները, որոնց անդամները տարիներ անց մահացել են, ստացել են ավելի քիչ սենյակով բնակարան, քան կորցրածն են եղել: Միևնույն ժամանակ, այն ընտանիքներին, որոնց պարագայում ընտանիքի կազմը ընդլայնվել է (ամուսնություններ, երեխաների ծնունդ), ընտանիքի նոր անդամների թվով սենյակների ավելացում տեղի չի ունեցել, չի տրամադրվել, որի արդյունքում բնակարան ստանալուց հետո ընտանիքի անդամներից մի քանիսը շարունակել են ապրել տնակներում՝ մնալով փաստացիորեն անօթևան: Տվյալ խնդիրը հետևանք է օրենսդրական թերի կարգավորման, որին անդրադարձել ենք սույն զեկույցում:*

19.1) Պետական բնակապահովման ծրագրի շրջանակներում կառուցված «Մուշ 2» թաղամասի բնակիչների հետ իրականացված խորքային հարցազրույցների ժամանակ բոլոր մասնակիցները նշել են այն հանգամանքը, որ բնակարանը ստանալուց հետո ունեցել են բազմաթիվ խնդիրներ բնակարանի ներքին հարդարանքի, ջրամատակարարման և ջրահեռացման, կոյուղատար խողովակների վթարների, առաստաղների քանդման, դռների և լուսամուտների, հատակի լամինատի արագ քայքայման հետ կապված: Ըստ հարցվածների՝ բնակարանային պայմաններին վերաբերող իրենց բազմաթիվ բողոքները թե՛ պետության և թե՛ ՏԻՄ-ի կողմից մնացել են անարձագանք:

19.2) Բոլոր հարցվածները նշեցին, որ բնակարանների հանձնումից հետո պետության կողմից չի իրականացվել բնակարանային պայմանների որևէ գնահատում կամ հետադարձ կապ քաղաքացու հետ:

19.3) Խմբային հարցազրույցների շրջանակներում վերհանվեց այն հանգամանքը, որ պետության կողմից բնակարանային փոխհատուցումն իրականացվել է առանց դրանց պայմանների

գնահատման, ինչի պարագայում որոշ ընտանիքներ չեն տեղափոխվել իրենց ստացած բնակարան, քանի որ այն զուրկ է եղել տարրական պայմաններից և հանձնվել է շահագործման քանդված վիճակում: Միջոցների բացակայության պատճառով այդ ընտանիքները մինչ օրս բնակվում են տնակներում:

(20) Բնակարանների գնման վկայագրերի համար (ԲԳՎ) սահմանված պայմանները և առաջարկված գինը ցածր է եղել բնակարանների շուկայական գնից, որի պատճառով շահառուները լրացուցիչ վարկային պարտավորություններ են ստանձնել կամ սահմանված գնով ստիպված բնակելի տուն են ձեռք բերել գյուղական համայնքերում, որոնք հետագայում վաճառելու դեպքում, այդպես էլ չեն կարողացել բնակարան գնել և մնացել են անօթևան:

20.1) Վկայագրով սահմանված գումարի սահմաններում բնակարանի (բնակելի տան) գնման անհնարինության պատճառով եղել են շահառուներ, ովքեր կեղծ առուվաճառք են ձևակերպել, գումարը ստացել, սակայն այն օգտագործել են առողջապահական և/կամ այլ նպատակներով, արդյունքում կրկին մնալով անօթևան: Եղել են դեպքեր, երբ շահառուներն իրենք են դարձել խարդախության և կոռուպցիայի զոհ՝ զրկվելով թե՛ գումարից, թե՛ բնակարանից:

20.2) Պահանջվող փաստաթղթերի ձեռք բերման ծախսերը կրել են շահառուները, պետությունն այդ հարցով որևէ կերպ չի աջակցել կամ փոխհատուցել արված ծախսերը:

20.3) Պետության կողմից՝ բնակարանային փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը պատճառ կերպով չի ապահովվել, հարցվածներից շատերը դուրս են մնացել հերթացուցակներից տեղեկատվության պակասի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն ունենալու հետևանքով:

20.4) Բնակարանային փոխհատուցում ստացած անձանց պետության կողմից որևէ փոխհատուցում չի տրամադրվել նախորդ 20-30 տարիների ընթացքում տնակներում ծայրահեղ անբավարար կենսապայմաններում ապրելու, արդյունքում՝ առողջական խնդիրներ ձեռքբերելու, կրթության և աշխատանքային հնարավորություններից զրկվելու և սոցիալական մի շարք զրկանքներ կրելու համար:

Գյուժրու տնակային ավան և Իսահակյան 9 և Խրիմյան Հայրիկ 48 հասցեներով գտնվող վթարային շենքեր այցելության շրջանակներում անհատական/խորթային հարցազրույցների և տեղանքի դիտարկման արդյունքում վերհանված խնդիրների ամփոփում

(21) *Գյուժրի տնակային ավանում ապրում են երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանային փոխհատուցում չստացած անձիք/ընտանիքները: Տվյալ անձինք ապրում են 1989 թվականից հատկացված փայտե տնակներում, կրում են սոցիալական մի շարք պրկանքներ, որոնց համար երբևէ որևէ փոխհատուցում չեն ստացել պետության կողմից:*

21.1) Տնակային ավանում իսպառ բացակայում է ջրամատակարարումը: Ջրամատակարարման խողովակն ու կոյուղին խառնված են իրար, ինչի պատճառով թաղամասում առկա միակ ծորակը և դրա ջուրը նույնպես պիտանի չեն օգտագործման համար:

21.2) Տնակների շինարարական նյութը նախատեսված չէ բնակության նպատակով շինություն կառուցելու համար, քանի որ այն պարունակում է քիմիական բազմաթիվ նյութեր, որոնք համարվում են քաղցկեղածին: Տնակային թաղամասում ապրող բազմաթիվ բնակիչներ տարիների ընթացքում ձեռք են բերել ուռուցքային հիվանդություններ, որոնք համարում են հետևանք իրենց կենսապայմանների և կրած սոցիալական զրկանքների: Թե՛ այս և թե՛ առողջական այլ խնդիրների պարագայում շատերը հնարավորություն չեն ունեցել բուժում ստանալ, պետության կողմից նրանց չի տրամադրվել որևէ աջակցություն:

21.3) Մինչ այժմ տնակային ավանի որոշ բնակիչների բնակության հասցեն գոյություն չունեցող` փլված շենքի հասցեն է, ինչի պարագայում ընտանիքները չեն ստանում համապատասխան կարգավիճակ, որպեսզի կարողանան ընդգրկվել առաջնահերթ բնակարաններ ստացողների ցանկում:

21.4) Տնակներում բնակվելու և բավարար պայմանների բացակայության պատճառով բազմաթիվ երիտասարդներ չեն պլանավորում իրենց անձնական կյանքը և չեն կարող ընդլայնել ընտանիքի կազմը:

21.5) Մինչ օրս տնակային ավանում բնակվողները պետության,

տեղական կամ տարածքային կառավարման մարմինների կողմից չեն հրավիրվել որևէ իրազեկման, հանրային քննարկման միջոցառման, որոնք ուղղված կլինեին բնակարանային իրավունքին, բնակիչների ներկա կարիքների լուծմանն ու խնդիրների հաղթահարմանը:

- 21.6) Տնակային ավանի բնակիչները բացարձակ անբավարար են գնահատում տնակային ավանի և տնակների անվտանգության, ջրամատակարարման, սանիտարահիգիենիկ պայմանների և շրջակա միջավայրի, աղբահանության, ենթակառուցվածքների առկայության վիճակն ու պայմանները: Սանիտարահիգիենիկ պայմանների բացակայության պատճառով շատերը տարիների ընթացքում ձեռք են բերել մաշկային հիվանդություններ: Տնակներում մշապես ցուրտ է, ինչը ևս պատճառ է բնակիչների առողջական մի շարք խնդիրների:
- 21.7) Տնակներում սենյակների թիվը չի համապատասխանում բնակվող անձանց թվին, չկա բավարար տարածք՝ բնակիչների քնելու, ազատորեն տեղաշարժվելու համար:
- 21.8) Երեխաների համար տարածքում չկան խաղահրապարակներ, տնակներ կան, որոնց մոտակայքում տարիներ շարունակ լցված է երկրաշարժից մնացած և այո այսօր չմաքրված շինարարական աղբ:
- 21.9) Հաշմանադամություն ունեցող անձանց համար որևէ հարմարություն չկա ստեղծված՝ ո՛չ տնակում, ո՛չ բակում:
- (22)** *Վթարային շենքերում մարդիկ բնակվում են 1989թ.-ից և առ այսօր պետության կողմից չեն ստացել որևէ աջակցություն կամ փոխհատուցում, երբևէ չի իրականացվել շենքերի վերանորոգում, պատկան մարմինների կողմից չեն իրականացվել որևէ հանդիպումներ կամ խորհրդատվություններ բնակիչների հետ՝ իրենց կենսապայմաններին ծանոթանալու նպատակով:*
- 22.1) Վթարային շենքերում պարբերաբար փլուզումներ են տեղի ունենում, կտուրից քարեր են պոկվում ու ընկնում բակ, հատկապես անձրևային օրերին:
- 22.2) Կոյուղատարերը բավականին հին են, ոչ մի անգամ չեն վերանորոգվել կամ փոխվել, նկուղները օգտագործման ենթակա

չեն, միշտ լցված են կոյուղաջրով, տիրում է գարշահոտություն, հատկապես ամառային ամիսներին

22.3) Շենքերում խոնավության աստիճանն այնքան բարձր է, որ բնակարաններում որևէ վերանորոգում անելն անիմաստ է: Պատերը կիսափուլ են, մարդիկ ապրում են կյանքին սպառնացող վտանգավորության պայմաններում:

22.4) Ենթակառուցվածքները բացակայում են, շուրջը ամբողջովին երկրաշարժից մնացած շինարարական աղբ է:

«Փարոս» համայնքատիրության հետ խմբային հարցազրույցի արդյունքում վերհանված խնդիրների ամփոփում և դեպքի նկարագրություն²⁴

1988 թվականի երկրաշարժի հետևանքով Գյումրի քաղաքի խրիմյան Չայրիկ խճուղու թիվ 48 շենքը վնասվել է և դարձել վթարային: Բնակիչները տեղափոխվել են բնակվելու տնակներ, սակայն շենքը վերականգնելու նպատակով ստեղծել են «Փարոս» համատիրությունը և իրենց նյութական միջոցներով կատարել են բավականին աշխատանք՝ կրկին շենքում վերաբնակվելու համար՝ տեղադրել են շենքի պատուհանները և դռները, մաքրել և տեղափոխել ողջ շինարարական աղբը, մաքրել են աստիճանները, կառուցել են միջնապատեր, ինչպես նաև իրենց միջոցներով պատվիրել են շենքի ամրացման և վերականգնման նախագիծը, որը գծագրվել է 1995թ.-ին՝ «Երևան նախագիծ» ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի կողմից:

Համաձայն մասնագիտական եզրակացության, շենքն ունի երրորդ, մասնակի չորրորդ աստիճանի վթարայնություն: Սակայն եթե հինգերորդ հարկը ապամոնտաժվեր, շենքը կունենար երրորդ աստիճանի վթարայնություն: Տվյալ պայմաններում անհրաժեշտ էր, որպեսզի տեղական իշխանությունները շենքն ամրացնեին ու կտուրը տեղադրեին (որն ի դեպ տարիների ընթացքում է քանդվել ամբողջությամբ), որից հետո հնարավոր էր վերաբնակեցնել շենքը նախկին բնակիչներով և նույնիսկ ավել բնակարաններ կլինեին այլ անօթևանների տրամադրելու համար:

Իշխանությունների կողմից, շենքի վերականգման համար որևէ աշխատանքներ

24. Գործի շրջանակներում «Փարոս» համայնքատիրության անդամներին իրավաբանական խորհարդատվություն է տրամադրվել «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի» կողմից: Բերված տեղեկատվությունը հանդիսանում է համայնքատիրության անդամների հետ իրականացված խորքային հարցազրույցի և կենտրոնի աշխատանքների շրջանակներում հավաքագրված տեղեկատվության ամփոփ ներկայացում:

չեն տարվել, բնակիչներին իրենց կողմից տարված վերականգման աշխատանքների համար որևէ փոխհատուցում չի տրվել, պետության կողմից մշտապես խոչընդոտվել է բնակիչների՝ շենք վերադառնալու հնարավորությունը:

2000 թ.-ին Շիրակի մարզպետի 25.07.2000թ.-ի թիվ 33 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի որոշմամբ շենքը մտցվեց առաջին փուլի ամրացման ծրագրի շրջանակներում և ենթակա էր վերակառուցման: Սակայն, տեղի իշխանությունների անհիմն պատճառաբանություններով շենքը հանվեց վերականգնման ցուցակներից՝ մնալով անորոշ վիճակում: ՏԻՄ-ը պնդում էր, որ գումար չունի այն վերականգնելու, ոչ էլ կարող է քանդել: Իբրև շենքը չամրացնելու պատճառ տեղական իշխանությունների կողմից տարբեր ժամանակ տարբեր հիմնավորումներ են ներկայացվել. պաշտոնական մեկ գրությամբ այն խանգարում է արտադրող գործարաններին, մեկ ուրիշ գրությամբ՝ այդտեղով պետք է անցնի ավտոճանապարհ («Յուսի-Յարավ» մայրուղին), մի գրությունով էլ պետության կողմից բնակիչներին առաջարկվել է վարկային պարտավորություններ վերցնել և շենքը վերանորոգել:

«Փարոս» համայնքատիրության հանդեպ պետական տարբեր կառույցների, ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առ այսօր դրսևորվել է բացարձակ անտեսում և հակաիրավական վարք, որի արդյունքում 20 ընտանիք ժամանակին հնարավորություն չունեցան վերաբնակեցվելու իրենց բնակարաններում, իսկ մոտ 10 ընտանիք արդեն 28 տարի է բնակվում են ժամանակավոր տնակներում, որոնք վաղուց արդեն շարքից դուրս են եկել:

Այս տարիների ընթացքում համայնքատիրության անդամները՝ բնակվելով տնակներում կամ վարձակալությամբ, վատթարացրել են իրենց առողջությունը, կորցրել կրթություն ստանալու, հետևաբար նաև արժանապատիվ աշխատանք ունենալու հնարավորությունները:

Համայնքատիրության նախագահը՝ ստեղծված իրավիճակը և իրենց անցած ճանապարհը նկարագրելիս, նշեց՝ «Ամեն օր արթնանալ տնակում և տեսնել քո շենքը՝ կիսաքանդ կանգնած հարևանությամբ, նշանակում է ամեն օր վերապրել երկրաշարժի օրերը, կորցնելով հոգեկան առողջությունը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Չեկույցը պատրաստող հասարակական կազմակերպությունների դաշինքը՝ հիմնվելով իրականացված ուսումնասիրության արդյունքների վրա, կարևորելով Հայաստանում բնակարանային իրավունքի իրացման մի շարք խնդիրների և, մասնավորապես, ք. Գյումրիում անօթևանության խնդրի հրատապ լուծումը, Տնտեսական, սոցիալական և մշակութային կոմիտեին կոչ է անում պետության առաջադրել մի շարք հարցադրումներ, կապված ստորև ներկայացվող առաջարկությունների հետ:

Առաջարկություն 1. Ապահովել Դաշնագրի հոդված 11-ով սահմանված բավարար կեսամակարդակի և բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման օրենսդրաիրավական հիմքերը՝ ներառյալ, սահմանադրական երաշխիքները:

Առաջարկություն 2. Վավերացնել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությունը:

Առաջարկություն 3. Ընդունել ազգային բնակարանային քաղաքականությունն արտացոլող փաստաթուղթ, որը կլինի իրավունքահենք, կձևակերպի բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման պետական ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, կմշակվի մասնակցության սկզբունքի պահպանմամբ՝ երաշխավորելով առավել խոցելի խմբերի, ներառյալ՝ անօթևան, անբավարար բնակարանային պայմաններ ունեցող անձանց և նրանց ընտանիքների հետ խորհարդակցությունների իրականացումը:

Առաջարկություն 4. Ձևավորել ՏՄՄԿ ԸՄ 4-ում ներկայացվող բնակարանային պայմանների «համապատասխանելիության» չափորոշիչները լիարժեք կերպով արտացոլող նորմատիվային հիմք, երաշխավորել, որ այսուհետ՝ պետական աջակցության շրջանակներում տրամադրվող բոլոր բնակարանները համապատասխանելու են տվյալ չափանիշներին:

Առաջարկություն 5. Վերանայել աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիներին տրամադրվող պետական աջակցության և փոխհատուցման ձևաչափը, բնակարանային ապահովումից անցում կատարելով դեպի տվյալ խմբերի բավարար կեսամակարդակի իրավունքի լիարժեք իրացմանն ուղղված մոդելին: Երաշխավորել աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների՝ արժանապատիվ և անվտանգ բնակարանային պայմաններում ապրելու իրավունքը:

Առաջարկություն 6. Իրականացնել երկրաշարժից տուժած և աղետի գոտու բնակավայրերում մինչ այժմ իրականացված բնակապահովման պետական ծրագրերից դուրս մնացած անձանց և նրանց ընտանիքների հաշվառում, նրանց խոցելիությունների, առողջապահական, կրթական, աշխատանքային և այլ կարիքների համալիր գնահատում: Տվյալ հաշվառումը պետք է ներառի հետևյալ խմբերին՝ ա) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և մինչ այժմ բնակարանային փոխհատուցում չստացած անձինք, բ) երկրաշարժի արդյունքում վնասված/վթարային շենքերում ապրող և բնակարանային փոխհատուցման ծրագրերի շրջանակներում չընգրկված անձինք, գ) բնակարանային փոխհատուցում ստանալուց հետո տարատեսակ պատճառներով կրկին անօթևանության մեջ հայտնված և տնակներում ապրել շարունակող անձինք: Իրականացված վերահաշվառման և գնահատման արդյունքում ձևավորել պետական առաջիկա քաղաքականությունն ու գործողությունների ծրագիրը՝ ուղղված տվյալ խմբերին պետական աջակցության և փոխհատուցման տրամադրմանը:

Առաջարկություն 7. Մինչ պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրի մշակումն ու ընդունումը, միջանկյալ լուծում տալ աղետի գոտու բնակավայրերում անօթևանության խնդրին, արձագանքել տվյալ անձանց շրջանում համատարած ծայրահեղ աղքատության խնդրին՝ անօթևան անձանց տրամադրելով բնակարանի վարձակալության միջոցներ, նյութական և ոչ նյութական աջակցություն՝ առաջնային սոցիալական կարիքների և բավարար կենսամարդակի ապահովման համար:

Առաջարկություն 8. Մշակվող պետական քաղաքականության փաստաթուղթը պետք է լինի իրավունքահենք՝ ուղղված աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների բավարար կենսամակարդակի, ներառյալ՝ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի լիարժեք իրացմանը, ինչպես նաև պետք է մշակվի շահառու բոլոր խմբերի գործուն մասնակցությամբ և դրվի հանրային լայն քննարկման:

Առաջարկություն 9. Պետական քաղաքականությունն ու ռազմավարական ծրագիրը պետք է ուղղված լինեն մինչև ՏՄՄԻԿ հաջորդ դիտարկում աղետի գոտու վերականգման և անօթևանության խնդրի հաղթահարման շրջանակներում պետական պարտավորություններն առաջադիմորեն իրականացնելուն (progressive realization), պարունակեն համապատասխան չափորոշիչներ և ցուցիչներ, սահմանեն պետական ռազմավարության միջանկյալ և վերջնական նպատակները, որոնք պետք է լինեն չափելի և գնահատելի, ունենան մշտադիտարկման և գնահատման գործիքակազմ:

Առաջարկություն 10. Ստեղծել փաստահավաք խումբ/ ԱԺ քննիչ հանձնաժողով, որը կգրառվի աղետի գոտու բնակավայրերի քաղաքացիների՝ նախորդ 31 տարիների ընթացքում անօթևանության պայմաններում խախտված իրավունքների, նրանց հանդեպ կատարված պետական հանցագործությունների, կոռուպցիայի, խարդախության դեպքերի վերհանման աշխատանքներով: Ապահովել անձանց խախտված իրավունքների վերականգնումը և կրած բարոյական և նյութական վնասի փոխհատուցումը:

Առաջարկություն 11. Ապահովել աղետի գոտու բնակավայրերում բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը, ինչպես նաև քաղաքացիների՝ առողջության, կրթության, աշխատանքի և հարակից այլ իրավունքների իրացման լիարժեք պայմանները:

Առաջարկություն 12. Մշակել երկրորդային անօթևանության հաղթահարման ուղղված պետական քաղաքականություն, ներդնել պետական աջակցության այնպիսի մեխանիզմներ, որոնց շնորհիվ արդեն բնակարանային փոխհատուցում ստացած անձանց համար բնակարանի վաճառքը չի հանդիսանա կյանքի նվազագույն պայմանների և կարիքների ապահովման միակ/հիմնական աղբյուր, դնելով նրանց անօթևանության կարգավիճակում կրկին հայտնվելու բարձր ռիսկայնության գոտում:

Առաջարկություն 13. Ապահովել ՀՀ վարչապետի 2018թ.-ի թիվ 1658-Ա որոշմամբ ստեղծված և աղետի գոտու բնակավայրերում փաստագրում իրականացնող Աշխատանքային խմբի հանրային հաշվետվողականությունը, խմբի կողմից՝ ՀՀ կառավարությանը ներկայացվող առաջարկությունները դնել հանրային քննարկման, ապահովել քննարկումների շրջանակներում թիրախային խմբի առավել ակտիվ և գործուն մասնակցությունը:

Առաջարկություն 14. Իրականացնել աղետի գոտու բնակարավայրերի բոլոր բնակելի շենքերի վթարայնության պատճառ գնահատում, ապահովել վթարային շենքերի վերանորոգում, իսկ բնակելիության չափանիշներին չհամապատասխանող վթարային շենքերի բնակիչներին տրամադրել բնակարանային փոխհատուցում:

Առաջարկություն 15. Իրականացնել աղետի գոտու բնակավայրերի վերականգման և աղետի գոտու քաղաքացիների բնակարանային իրավունքները կարգավորող օրենսդրական դաշտի վերանայում, իրականացնել չափորոշիչների, տրամադրման կարգերի, առանջնահերթությունների վերանայում՝ կարիքների գնահատման հիման վրա, հաշվի առնելով աղետի գոտում բնակվող և երկրաշարժից տուժած տարբեր խմբերի ներկայիս իրավիճակը, խոցելիություններն ու կարիքները:

Առաջարկություն 16. Արդեն բնակարանային փոխհատուցում ստացած անձանց շրջանում («ԲԳՎ» և սոցիալական բնակարանների տեսքով) իրականացնել բնակարանային պայմանների գնահատում, երաշխավորել պայմանների համապատասխանությունը ՏՍՄԻԿ ԸՄ 4-ով սահմանված չափանիշներին:

Առաջարկություն 17. Հրատապ արձագանքել «Փարոս» համատիրության անդամների՝ իրենց պատկանող շենքի վերականգման պահանջին, ապահովել տվյալ անձանց ոտնահարված իրավունքների վերականգնումը, երաշխավորել նրանց՝ բնակարանային իրավունքների լիարժեք իրացումն՝ ամենասեղմ ժամկետներում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲԱՎԱՐԱՐ ԲՆԱՐԱՆԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԱՇՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻԶԱԿԱԶՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1988 թ.-ի երկրաշարժի արդյունքում Շիրակի մարզի Գյումրի քաղաքում անօթևան մնացած անձանց բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման խնդիրների վերհանման նպատակով իրականացվել են խմբային և խորքային հարցազրույցներ և տեղազննություններ: Տվյալ մարզի և մասնավորապես՝ Գյումրի քաղաքի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Գյումրու անօթևանության խնդիրը Հայաստանում առկա ամենահրատապ հումանիտար խնդիրներից է, որին արդեն 31 տարի է, ինչ լուծում չի տրվում: Չեկույցը պատրաստած հասարակական կազմակերպություններից երկուսը հանդիսանում են տեղական՝ մարզահեն կազմակերպություններ, ուստի և առավել լավ են տիրապետում Գյումրու անօթևանության խնդրին:

Դաշտային ուսումնասիրությունների օբյեկտ են հանդիսացել ք. Գյումրիում բնակվող հետևյալ խմբերը ներկայացնող անձինք և նրանց ընտանիքները՝

- a) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից անմիջականորեն բնակարանային փոխհատուցում ստացած,
- b) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանների գնման վկայագրեր (ԲԳՎ) ստացած,
- c) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանային փոխհատուցում չստացած (Գյումրու տնակային ավանի բնակիչներ),

- d) երկարաշարժից վնասված վթարային շենքերում ապրողներ (Իսահակյան 9 և Խրիմյան Չայրիկ 48 հասցեներով գտնվող շենքեր):

Ուսումնասիրության շրջանակներում որպես տեղեկատվության հավաքագրման մեթոդներ են կիրառվել խմբային հարցազրույցը, անհատական/խորթային հարցազրույցը և տեղազննումը/տեղանքի դիտարկումը (sight visit):

Չետագոտության ընթացքում իրականացվել է երեք խմբային հարցազրույց և 13 խորթային հարցազրույց: Չարցազրույցների իրականացման համար կիրառվել է հարցաշար-ուղեցույց: Չարցազրույցների մասնակիցների տարիքային խումբն է 20-65 տարեկանը:

Խմբային հարցազրույցներ են իրականացվել հետևյալ խմբերի հետ՝

- 1) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից անմիջականորեն բնակարանային փոխհատուցում ստացածներ – 1 խումբ (12 մասնակից՝ 2 տղամարդ, 10 կին),
- 2) երկրաշարժի արդյունքում անօթևան մնացած և պետության կողմից բնակարանների գնման վկայագրեր (ԲԳՎ) ստացածներ – 1 խումբ (6 հոգի՝ 2տղամարդ, 4 կին),
- 3) «Փարոս» համայնքատիրության անդամներ – 1 խումբ (6 հոգի, 2 տղամարդ, 4 կին):

Անհատական/խորթային հարցազրույցներ են իրականացվել հետևյալ խմբերի հետ՝

- 1) Գյումրու տնակային ավանում բնակվողներ – 5 կին,
- 2) Իսահակյան 9 և Խրիմյան Չայրիկ 48 հասցեներով գտնվող վթարային շենքերի բնակիչներ - 8 հոգի՝ 3 տղամարդ, 5 կին:

Չարցազրույցներից զատ իրականացվել են նաև տեղանքի դիտարկումներ Գյումրու տնակային ավանում և Իսահակյան 9 և Խրիմյան Չայրիկ 48 հասցեներով գտնվող վթարային շենքերի տարածքում՝ նախապես պատրաստած դիտարկման քարտերի հիման վրա: Տեղանքի դիտարկման շրջանակներում արված լուսանկարները կարող եք գտնել հավելված 2-ում:

Չարցաշար-ուղեցույցներն ու դիտարկման քարտերը կազմվել են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 4-ով ամրագրված՝ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի չափանիշների հիման վրա:

